Արձանագրություն 5

<<ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	24.08.2017 թ. ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Աղայանց /գնահատող/
Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Դանիելյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Մ. Կարախանյան)

1.1 <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 22.08.2017թ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

1.3 Հանձնաժողովի կողմից Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեցին հետևյալ անհամապատասխանությունները.

1. Հավելված 5-ը հաստատված չէ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:
2. Հավելված 5.1-ը և Հավելված 5.2-ը, ինչպես նաև դրանց կից ներկայացված փաստաթղթերը հաստատված չեն համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված պահանջների:
3. Հավելված 5.1-ով ներկայացված բեռնատար մեքենայի մակնիշը, պետհամարանիշը և արտադրության տարեթիվը չեն համապատասխանում կից ներկայացված փաստաթղթին:
4. Հավելված 5.1-ով ներկայացված ավտոկռանի մակնիշը լրացված է թերի:
5. Հավելված 5.1-ին կից ներկայացված ավտոկռանի վարձակալության պայմանագրի կնքման տարեթիվը անընթեռնելի է, իսկ գործողության ժամկետը

իրականությանը չհամապատասխանող: Բացակայում է նաև պայմանագրի կողմ հանդիսացող Մայիս Վահրադյանի ինքնությունը հաստատող փաստաթուղթը:

6. Բացակայում է հավելված 5.2-ով ներկայացված մասնագետի գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը առաջարկել <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1.5 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկի, 303 սենյակ հասցեում, ժամը 14:00-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետով սահմանված կարգին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մ. Կարախանյան /նախագահ/

_____ Մ. Աղայանց

_____ Ա. Խաչատրյան

_____ Ա. Դանիելյան

_____ Մ. Պողոսյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/

Արձանագրություն 6

<<ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.08.2017թ.
ժ.14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Աղայանց /գնահատող/
Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Դանիելյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու և հայտը գնահատելու մասին

(Մ. Կարախանյան)

1.1 <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 28.08.2017թ ստացված գրությունը կասեցնել գնման գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0:

1.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 10:30-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Մ. Կարախանյան /նախագահ/
_____ Մ. Աղայանց
_____ Ա. Խաչատրյան
_____ Ա. Դանիելյան
_____ Մ. Պողոսյան
_____ Ա. Մարգարյան /քարտուղար/

Արձանագրություն 7

<<ՀՀԿԳՆԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով
գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 09.10.2017թ.
ժ.10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Աղայանց /գնահատող/
Ա. Խաչատրյան /գնահատող/
Ա. Դանիելյան /բացող/
Մ. Պողոսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Գնման գործընթացը շարունակելու մասին
(Մ. Կարախանյան)

1.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 29.09.2017թ մինչև 03.10.2017թ ընկած ժամանակահատվածում հրապարակված 26.09.2017թ ընդունված թիվ ՍՅ-ԷՍ-2017/37 որոշումը՝ շարունակել գնահատման գործընթացը և վերագնահատել <<Կամպարե>> ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 , դեմ 0:

2. Գնահատման արդյունքների մասին
(Մ. Կարախանյան)

2.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Կամպարե>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.3 Ընտրված մասնակցին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Մ. Կարախանյան /նախագահ/
Մ. Աղայանց
Ա. Խաչատրյան
Ա. Դանիելյան
Մ. Պողոսյան
Ա. Մարգարյան /քարտուղար/